TRANSMISSION REPORT

:ARMENIAN DIOCESE (APR 05 '94 01:27PM)

DATE	START TIME	REMOTE TERMINAL IDENTIFICATION	MODE	TIME	RESULTS	TOTAL PAGES	DEPT. CODE	FILE NO.
APR 05	02:25PM	12017911329 [illegible]	[illegible]	01'24"	OK	03		

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ
Archbishop Khajag Barsamian, Primate

ST. VARTAN CATHEDRAL 25 YEARS 1968-1993

Թիւ 1715
Ապրիլ 5, 1994

Հոգեշնորհ
Տ. Վահան Վրդ. Յովհաննէսեան
Հովիւ Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ֆէրլոն.

Սիրելի Հայր Վահան,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Փետրուար 11, 1994 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Յունուար 30, 1994-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի հինգ անդամներ։ Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը։

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Թովմաս Աշպահեան
Պրրթ Պետրոսեան
Արա Հուրտաճեան
Կապրիէլ Գապրիէլեան
Կրէկ Նաճարեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը։

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք հետեւեալները. Տարեկան Տեղեկագրի էջ 4-ի պաշտօնական ստորագրութիւնները կը պակսին (կը ներփակուի յիշեալ էջը. զայն ստորագրել տալէ ետք անմիջապէս վերադարձուցէք Առաջնորդարան)։ 1993 տարուան համայնքիդ հաշուական ընդհանուր գումարը Տարեկան Տեղեկագրի եւ Ծխական Տեղեկագրի մէջ կը տարբերին. անոնք պէտք է համապատասխանեն իրարու։ Համաձայն Թեմական Կանոնադրութեան՝ Անդամական Ժողովի դիւանի ընտրութիւնը եւս պէտք է կատարուի երկպատիկ ցանկի վրայէն եւ գաղտնի քուէարկութեամբ։

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ։

Սիրոյ ողջունիւ

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, NY 10016-4885 TELEPHONE 212.686.0710 FAX 212.779.3558